

ՀՀ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2010թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2011թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2010թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		3
1.	ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ	4
2.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	6
2.1.	Կրթություն և մշակույթ	6
2.2.	Առողջապահություն	10
2.3.	Սոցիալական պաշտպանություն	11
3.	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	16
3.1.	Գյուղատնտեսություն	16
3.2.	Բնապահպանություն	17
4.	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	19
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ		22
5.1.	Ճանապարհաշինություն	22
5.2.	Զրամատակարարում ու ջրահեռացում	23
5.3.3	Գազամատակարարում	24
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		25
6.1.	Տարածքային կառավարում	25
6.2.	Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	26
6.3.	Քաղաքացիական հասարակություն	27
7.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով 2010թ. ընթացքում Լոռու մարզում իրականացված աշխատանքներ		33
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ 2010 թ. պետ. բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների		37
ՀԱՎԵԼՎԱԾ 3. 2010 թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում այլ աղբյուրներով ֆինանսավորված ծրագրերի իրականացման վերաբերյալ		39

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2010-2013թթ. ՄԶԾ շրջանակում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2010թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և տարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա: Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի, հաստատվել է ՀՀ Կառավարության 2009թ հոկտեմբերի 1-ի արտագնա նիստի թիվ 1130-Ն որոշմամբ: ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- ❖ Մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- ❖ Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- ❖ Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- ❖ Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- ❖ Քաղաքաշինություն,
- ❖ Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- ❖ Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում,
- ❖ մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,

❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

ՀՀ Լոռու մարզպետի 2010թ. Փետրվարի 8-ի թիվ 18-Ա որոշմամբ հաստատվել է 2010թ. Տարեկան աշխատանքային պլանը, որի նպատակն է աջակցել ՄԶԾ-ի իրականացման աշխատանքներին: ՏԱՊ-ի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄԶԾ մոնիտորինգի համակարգը: Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄԶԾ յոթ ոլորտներում («Մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», «Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն») 2010թ. ՏԱՊ-ով նախատեսված և տարվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:

Հավելված 1-ում բերված է տեղեկատվություն «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում 2010թ. ընթացքում Լոռու մարզում իրականացված աշխատանքների վերաբերյալ

Հավելված 2-ում բերված է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների վերաբերյալ:

Հավելված 3-ում բերված է տեղեկատվություն 2010թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում այլ աղբյուրներով ֆինանսավորված ծրագրերի իրականացման վերաբերյալ:

1. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2010 թ. ՏԱՊ-ով առաջարկվել էր բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման

միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Կարևորելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անհրաժեշտ էր համարվել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ՉԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2010թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ աջակցությունները՝

- ✓ Տեղեկատվական և գործարար ուղեցույցների տրամադրում - 259 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Տեղեկատվական աջակցություն - 247 սուբյեկտ և անհատ
- ✓ Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն - 6 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ «Հաջող սկիզբ» ծրագրի 18 մասնակիցներից՝ ստացել են պետական գրանցում - 6 ՓՄՁ սուբյեկտ, որոնցից վարկավորվել են - 4 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Ապրանքների և մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնդման աջակցության ծրագիր - 6 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Ուսուցողական աջակցության ծրագիր (140.000դրամ) - 68 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Խորհրդատվական աջակցության ծրագիր (160.000դրամ) - 2 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Վարկային երաշխավորությունների ծրագիր (11,18 մլն դրամ) - 2 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ «Դեղին էջեր» - ում զետեղելու հայտ - 9 ՓՄՁ սուբյեկտ

Մարզպետարանի Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի ու Լոռու մարզի առևտրաարդյունաբերական պալատի համատեղ ջանքերով կազմակերպվել են հանդիպումներ, սեմինարներ Հայաստանի Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Կ.Վարդանյանի հետ, քննարկվել են համագործակցության ուղղությունները, աշխատանքները, ժամկետները: Որպես արդյունք արձանագրվել է.

- ✓ Վանաձորի գազաչափիչ սարքերի ստեղծման փորձարարական թիմի աշխատանքների շնորհանդեսը,
- ✓ ՀՃՊՀ Վանաձորի մասնաճյուղի և «Ինստիգեյթ» ՓԲԸ-ի համագործակցությունը, կազմակերպվել է 4-ամսյա դասընթաց,
- ✓ Ուսանողների և դասախոսների այցելություն «Նեյշընըլ Ինստրումենթս» ՓԲԸ (Երևան) գործունեության ծանոթության նպատակով,
- ✓ Նախագծվում է մասնագիտական փորձառություն ունեցող անձանց տվյալների բազան:
- ✓ Կազմակերպվել է «ԱրմՌոբոտիքս» մրցույթի մասնակիցների աշխատանքերի ցուցադրությունը, այցելել են շուրջ 300 մարդ:

Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող կարևոր գործոններից է Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ընդունված մարզի գերակա ոլորտների զարգացման հայեցակարգային դրույթների հետևողական իրականացումը:

Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Մասնավորապես, 2010թ. մշակվել է ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1222-Ն որոշմամբ հայտարարված ‘Հյուսիսային դարպաս’ զբոսաշրջության կենտրոնի (ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Սանահինի, Հաղպատի վանական համալիրները, մարզի տարածքում գտնվող Լոռի բերդը, Հնեվանքի, Ախթալայի, Քոբայրի, Բարձրաքաշի, Դսեղի, Քառասնից մանկան, Արդվիի Սուրբ Հովհաննես վանական համալիրները, Օձունի, Բզավորի եկեղեցիները, Դսեղի Ծովեր Լիճը, ինչպես նաև Սանահինի, Հաղպատի, Օձունի, Դսեղի գյուղական ու Ախթալայի ու Թումանյանի քաղաքային համայնքները) զարգացման ծրագիրը՝ համապատասխան հայեցակարգային նպատակներին ու գերակա խնդիրներին: Մասնավոր ներդրողներին խրախուսելու, ինչպես նաև տարածաշրջանային զարգացման ծրագրերի մշակման գործում կարևոր է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը: 2010թ. Ֆրանսիայի հանրապետության Պրովանս- Ալպ Կոտ դ’Ազյուր (ՊԱԿԱ) ռեգիոնի և ՀՀ Լոռու մարզի համագործակցությամբ Լոռու Առևտրա-արդյունաբերական պալատի զարգացման խթանման ծրագրի շրջանակներում ավարտվել է մարզի տնտեսական ինտերակտիվ քարտեզի կազմման աշխատանքները, ինչը կնպաստի նոր կապերի ստեղծման և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացմանը: Որոշակի աշխատանք է տարվել նաև մարզում էկոտուրիզմի և տուրիզմի ոլորտում ձեռնարկատիրությամբ զբաղվողների մասնագիտական ունակությունների ու կարողությունների զարգացման բնագավառում:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն և մշակույթ

Ելնելով աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի դրույթներից և հիմք ընդունելով Լոռվա մարզում կրթության ոլորտի առկա իրավիճակը՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվել է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվել միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, 12-ամյա կրթության ուսումնական ծրագրերի, գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական և միասնական քննական համակարգի կատարելագործմանը: Շարունակվում և կատարելագործվում է հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացը (ներառարական կրթություն, որի նպատակով 2010թ. ՀՀ պետբյուջեից նախատեսվել է հատկացնել 34.5 մլն դրամ Վանաձորի թիվ 18 և Ստեփանավանի թիվ 1 դպրոցներին):

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև պարտադիր ուսուցումից սոցիալական պատճառներով դուրս մնացած երեխաներին հանրակրթական համակարգ վերադարձնելու վրա:

2010թ. ՏԱՊ-ով շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման, ավագ

դպրոցների հիմնադրման, մարզում մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված ծրագիրը:

Մարզի կրթության ոլորտում 2010թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված 1332.77 մլն դրամի դիմաց իրականացվել է 1200.17 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված 888.24 մլն դրամի դիմաց իրականացվել է 755.64 մլն դրամի աշխատանքներ: ՀՀ կրթության և գիտության նախարարության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրով նախատեսված «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ –ի հիմնանորոգման 132.63 մլն դրամ ծավալով աշխատանքները տեղափոխվել են 2011թ.:

Կրթության ոլորտում 2010թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2010թ. ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2010թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	1332.77	1200.17	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	888.24	755.64	
1	Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում	20.07	20.07	
2	Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում	20.33	20.33	
3	Հարթագյուղի դպրոցի հիմնանորոգում	39.47	39.47	
4	Քարաձորի դպրոցի հիմնանորոգում	20.39	20.39	
5	Մեծ Պարնու դպրոցի տանիքի վերանորոգում	5.50	5.50	
6	Դսեղի դպրոցի շենքի հիմնանորոգում	28.00	28.00	
7	գ.Խնկոյանի դպրոցի տանիքի կառուցում (հիմնանորոգում)	52.93	52.93	
8	Վանաձորի թիվ 22 դպրոցի տարածքից ջրագծի տեղափոխում	2,12	2,12	
9	Վանաձորի թիվ 2 դպրոցի հիմնանորոգում	3,50	3,50	
10	Սպիտակի թիվ 1 դպրոցի տարածքից ջրագծի տեղափոխում	1,29	1,29	
11	Սպիտակի թիվ 1 դպրոցի տարածքից կոյուղագծի տեղափոխում	13,59	13,59	
12	Սպիտակի թիվ 1 դպրոցի տարածքից անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցում	8,45	8,45	
13	Վանաձորի թիվ 22 դպրոցի մարզադահլիճի կառուցում	180.00	180.00	
14	Ստեփանավանի թիվ 6 դպրոցի մարզադահլիճի կառուցում	180.00	180.00	
15	Սպիտակի թիվ 1 դպրոցի մարզադահլիճի կառուցում	180.00	180.00	
16	«Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ հիմնանորոգում	132.60	0.00	Տեղափոխվել է 2011թ
II	ՀՍՆՀ	236.63	236.63	
1	Գեղասարի դպրոցի ջեռուցման համակարգի վերակառուցում	10.00	10.00	
2	Ստեփանավանի մարզադպրոցի ջեռուցման համակարգ	19.90	19.90	

3	Գյուլագարակի դպրոցի մարզադահլիճի կառուցում	12.70	12.70	
4	Սպիտակի թիվ 6 դպրոցի մարզադահլիճի կառուցում	90.10	90.10	
5	Վանաձորի թիվ 30 դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	36.10	36.10	
6	Ստեփանավանի մարզադպրոցի շենքի շինարարություն	67.83	67.83	
7.	Վահագնաձորի դպրոցի կառուցում	110.0	110.0	Համաֆինանսավորում «Վարդանանց ասպետներ» ՀԿ 36000 դոլար
III	«Հայաստան» հիմնադրամ	86.90	86.90	
1	Սպիտակի թիվ 2 դպրոցի մարզադահլիճի կառուցում	9.80	9.80	
2	Արձնու դպրոցի հիմնանորոգում	74.00	74.00	
3	Արձնու համայնքային կենտրոնի և դպրոցի ջրի արտաքին ցանցի կառուցում	3.10	3.10	
IV	Այլ	121.00	121.00	
1	Ֆիոլետովոյի դպրոցի հիմնանորոգում	6,00	6,00	
2	Շնողի մանկապարտեզի նորոգում	18,00	18,00	Համայնքի բյուջե
3	Թեղուտի մանկապարտեզի կառուցում	55,00	55,00	Համայնքի բյուջե
4	Վահագնաձորի մանկապարտեզի վերակառուցում	11,0	11,0	Շեն» ԲՀԿ և «Օրանտ Արմենիա»
5.	Հաղպատի մանկապարտեզի վերանորոգում	31,0	31,0	Շեն» ԲՀԿ և ԱՄՆ ՄԶԳ

Կրթության ոլորտում 2010թ իրականացված աշխատանքներից կարելի է նշել՝

- ✓ Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում, որի շրջանակներում.
 - ՊԲ միջոցներով ավարտվել են Վանաձորի թիվ 24, Խնկոյանի, Հարթագյուղի, Քարաձորի իսկ Հնդկաստանի միջոցներով՝ Արձնիի դպրոցների հիմնանորոգման աշխատանքները:
 - ՀՄՆՀ միջոցներով Գյուլագարակի (12.7 մլն դրամ) , Սպիտակի թիվ 6 (90.1 մլն դրամ) և Հայաստան Համահայկական հիմնադրամի միջոցներով Սպիտակի թիվ 2 դպրոցների (9.8 մլն դրամ) մարզադահլիճները կառուցման աշխատանքները ավարտվել են:
 - ՀՄՆՀ միջոցներով ավարտվել է Վանաձորի թիվ 30 դպրոցի (36.1 մլն դրամ) և Գեղասարի դպրոցի (10.0 մլն դրամ) ջեռուցման համակարգերի կառուցումը:
 - Դպրոցաշինության ԾԻԳ հիմնադրամի ֆինանսավորմամբ 2010թ.իրականացվել է 540,0 մլն ծավալով աշխատանքներ Վանաձորի թիվ 22, Ստեփանավանի թիվ 6 և Սպիտակի թիվ 1 միջնակարգ դպրոցների մարզադահլիճների կառուցման նպատակով: Աշխատանքները կշարունակվեն նաև 2011թ.:
 - Շահագործման է հանձնվել Վահագնաձորի հիմնական դպրոցի նորակառույց շենքը:
 - Վանաձորի թիվ 10, թիվ 11 և Գուգարքի թիվ 1 միջնակարգ դպրոցների վերակազմավորման հիման վրա ստեղծվել են 3 նոր ավագ դպրոցներ:
 - Ավարտված են դպրոցների կառավարման մարմինների վերակազմավորման գործընթացի նախապատրաստական աշխատանքները: Մարզի 158 հանրակրթական դպրոցները ունեն իրենց նոր՝ 8 հոգուց բաղկացած (նախկին 7-

ի փոխարեն) կառավարման խորհուրդներ, որոնց կազմերը հաստատվել են մարզպետի կողմից:

- ✓ 2010թ ընթացքում կիսամյակում մարզում նախադպրոցական հաստատությունների թիվը մնացել է անփոփոխ՝ 60 (որոնցից 5-ը՝ Արևաշողի, Լեռնանցքի, Կաթնաջրի, Մեծ Պարնիի և Սարահարթի, կազմակերպվել են Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսական ու մեթոդական աջակցությամբ, իսկ 1-ը՝ «Շողեր» ՀԿ կողմից): Չնայած ծրագրի ավարտի պատճառով Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից ֆինանսավորումը դադարեցվել է, Սպիտակի տարածաշրջանի նշված դպրոցները 2010թվականին ինքնուրույն շարունակում են նախադպրոցական ծրագրերի իրականացումը, որի շնորհիվ ընդգրկված մանկավարժների թիվը աճել է 21-ով, իսկ երեխաների թիվը՝ 171-ով (147-ը անապահով ընտանիքներից): Աշխատանքները այս ուղղությամբ շարունակվելու են:
- ✓ Վերանորոգվել է Վանաձորի տիկնիկային թատրոնի տանիքը ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ ընկերության կողմից:

2010թ. ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Մարզի մշակույթի ոլորտում 2010թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված 269,6 մլն դրամի դիմաց իրականացվել է 169,6 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված 130,1 մլն դրամի դիմաց իրականացվել է 88,1 մլն դրամի աշխատանքներ: ՀՀ պետական բյուջեի միջոցներից 1.632 մլն դրամ հատկացվել է «Լոռու մարզային գրադարան» ՊՈԱԿ-ին գույքի և տեխնիկական միջոցների ձեռք բերման համար: Քոբայրավանքի և Աքորու Բգավոր եկեղեցու վերանորոգման և վերականգնման աշխատանքների համար պետ. բյուջեից նախատեսված 42,0 մլն դրամ, ինչպես նաև ՀՄՆՀ-ով Խնկոյանի մշակույթի տան տանիքի հիմնանորոգման համար նախատեսված 58,0 մլն դրամ ծավալները տեղափոխվել են 2011թ.:

Մշակույթի ոլորտում 2010թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2010թ. ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2010թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	269.6	169.6	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	130.10	88.10	
1	«Լոռու մարզային գրադարան» ՊՈԱԿ	1,63	1,63	
2	Քոբայրավանքի վերանորոգում և վերականգնում	15.00		Տեղափոխվել է 2011թ
3	Աքորու Բգավոր եկեղեցու վերանորոգում և վերականգնում	27.00		
4	Օձունի վանքի վերանորոգում և վերականգնում	5.50	5.50	
5	Լեռնահովիտի մշակույթի տան հիմնանորոգում	16.83	16.83	
6	Ստեփանավանի մշակույթի պալատի շինարարություն	20.00	20.00	
7	Ծաթեր համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում	38.64	38.64	
8	Գարգառ համայնքի մշակույթի տան ջեռուցման համակարգի հիմնանորոգում	5,50	5.50	
II	ՀՄՆՀ	58,0		

1	Խնկոյանի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում	58,0		Տեղափոխվել է 2011թ
III	ԱՅԼ	81.50	81.50	
1	Շնողի մշակույթի տան նորոգում	57,00	57,00	Համայնքի բյուջե
2	Շնողի արվեստի դպրոցի նորոգում	24,50	24,50	Համայնքի բյուջե

Կրթության ազգային ինստիտուտի հետ նախապատրաստվել և անց են կացվել սեմինար պարապմունքներ մարզի բոլոր դպրոցների 10–11-րդ դասարաններում առանձին առարկաներ (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա և այլն) դասավանդող շուրջ 1000 ուսուցիչների մասնակցությամբ՝ ըստ տարածաշրջանային կենտրոնների: Նախապատրաստվել է ավելի քան 800 ուսուցիչների ցուցակը, որոնք 2011 թվականին պետք է վերապատրաստվեն և ատեստավորվեն:

2.2. Առողջապահություն

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են համարվում բուժօժանությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները: Համաշխարհային բանկի կողմից կշարունակվեն կազմակերպվող ընտանեկան բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման դասընթացները: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման (II-փուլ) նպատակով նախատեսվել է ր հատկացվել է 104 մլն դրամ, սակայն այն չի իրականացվել 2010թ և տեղափոխվել է 2011թ.: Պետական բյուջեից Լոռու մարզի առողջապահության ոլորտի զարգացման ծրագրերի համար հատկացումներ չեն եղել:

2010թ Լոռու մարզի առողջապահության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Ֆրանսիական UMAF կազմակերպության հետ ձեռք է բերվել փոխհամաձայնություն՝ շարժական ստոմատոլոգիական կլինիկայի միջոցով Լոռու մարզում իրականացնել մանկական ազգաբնակչության անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում: Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները, (իրականացնում են մինչև 15 տարեկան երեխաների անվճար ստոմատոլոգիական օգնություն, հատկացվում է անվճար դեղորայք):
- ✓ ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ՆՕՎԱ-2 ծրագրի կողմից «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և տարածաշրջանի մոտ 100 բժիշկներ ու բուժքույրեր վերապատրաստվել են մոր և մանկան առողջության պահպանման հարցերի շուրջ, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին և Ստեփանավանի տարածաշրջանի ընտրված բուժհաստատություններին տրամադրվել է 25 անուն բուժպարագա՝ հիմնականում մայրական խնամքի կազմակերպման նպատակով, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում հիմնվել և կահավորվել է «Մայրության դպրոց»-ի սենյակ: Բյուրնսի ամենամյա բարեգործական ընթրիքից հանգահանգանակած

միջոցներով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համար ձեռք է բերվել 5000 ԱՄՆ դոլար արժողությամբ սարքավորումներ և պարագաներ:

- ✓ Ֆրանսիական «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, որը գործում է Սպիտակ քաղաքում, 2010թ. մոտ 15.000 եվրո ընդհանուր արժողությամբ բժշկական սարքավորումներ (արհեստական շնչառության սարք, սոնոգրաֆ, ավտոմատ ճնշման սարքավորում, էխոգրաֆ, էլեկտրոկարդիոգրաֆ, օսցիլոգրաֆ, սնուցման պոմպեր, ֆունկցիոնալ մահճակալներ, բազկաթոռներ, պահարաններ, մահճասեղաններ) է հատկացրել «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին և մարզի մի շարք բուժհաստատություններին:
- ✓ Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկայում հատկացվել է տարածք, իրենց կողմից վերանորոգվել է, Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ից պայմանագրային հիմունքներով շտապ բուժօգնության մեկ մեքենա է հատկացվել հիվանդների տեղափոխման նպատակով:
- ✓ Ֆրանսիական «Ցավեր առանց սահմանի» կազմակերպության կողմից Լոռու մարզում մոր և մանկան առողջության բարելավման շրջանակներում իրականացվել է խորհրդատվություն և սոցիալական աջակցություն:
- ✓ «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության կողմից բժշկական նշանակության պարագաներ, գույք և սարքավորումներ են հատկացվել Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների շուրջ 25 բուժհաստատությունների՝ հիմնականում բուժական անկախ բարձրական կետերի: Իրականացվել է առողջապահական հաստատությունների բուժքույրերի վերապատրաստում «Վերարտադրողական առողջություն», «Սեռական հիվանդություններ», «Ալլերգիկ հիվանդություններ», «Անվտանգ սնունդ», «Նորածինների մաշկային հիվանդություններ» թեմաների շուրջը, ինչպես նաև միգրացիայով պայմանավորված իրականացվել է Տաշիրի տարածաշրջանի 5 համայնքներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագիր:
- ✓ «Վորդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացրած «Կամազ» մակնիշի հատուկ բժշկական ծառայության մեքենայով «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկների ուժերով Ալավերդու տարածաշրջանի համայնքներում մատուցվում են բժշկական խորհրդատվություն և լաբորատոր ախտորոշիչ ծառայություններ:
- ✓ Ալավերդի քաղաքում գործող հունական «Հիպոկրատ» բարեգործական կազմակերպության կողմից սպասարկվել են Թումանյանի տարածաշրջանի բազմաթիվ քաղաքացիներ, հիվանդները ստացել են համապատասխան դեղորայք: Հիմնադրամին կից գործում է շարժական բժշկական խումբ, որը սպասարկում է գյուղական համայնքների բնակչությանը: «Հիպոկրատ» հիմնադրամի կողմից դեղորայք և բժշկական նշանակության պարագաներ են տրամադրվել մարզի մի շարք բուժհաստատությունների:

2.3. Սոցիալական պաշտպանություն

ՄԶԾ-ում որպես ոլորտային նպատակ նախանշվել է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը Լոռու մարզում, որին նպատակաուղղվել են յոթ ծրագրային ուղղություններով առաջարկված թվով 10 ծրագրերը, որոնց իրականացմամբ կբարելավվի հանրային իրազեկման մակարդակը, սոցիալական ծրագրերի իրականացումը և սոցիալական ծառայությունների կառավարումը, կընդլայնվեն բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները,

մասնավորապես՝ տարեցների և հաշմանդամների շրջանում: Համագործակցության արդյունքում ենթադրվում է, որ կբարելավվի սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական բազան, շարունակաբար կընթանա սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում կզարգացվեն ոլորտում զբաղվածների կարողությունները:

2010թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը շարունակում է իր քաղաքականությունը վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալի ընդլայնման ուղղությամբ: 2010թ. Պետական բյուջեից «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզին հատկացվել էր 103,427 մլն դրամ, որի դիմաց մարզի համայնքներում կատարվել են սոցիալական իրավիճակի բարելավման 102, 88 մլն ընդհանուր ծավալով 60 ծրագիր:

Հավելված 1-ում բերված է 2010թ. ընթացքում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզում իրականացված աշխատանքները:

Որպես ոլորտային նպատակ ընտրված էր՝ Լոռու մարզում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այս ուղղությամբ նպատակադրված զգալի աշխատանքներ են կատարվել:

Անապահովության գնահատման համակարգում 01.01.2011թ. դրությամբ ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նպաստառու ընտանիքների թիվը կազմել է ամսական միջինը 18.401 (նախկինում՝ 18.729), հրատապ օգնություն են ստացել ամսական միջինը 1.078 ընտանիքներ (նախորդ տարի՝ 2.087): Սահմանված ժամկետներում են վճարվել նպաստները, կենսաթոշակները և գործազրկության նպաստները:

01.01.2011թ. դրությամբ Լոռու մարզում բնակվում են 52.137 կենսաթոշակառուներ, հաշմանդամ են 16.103-ը (որից՝ առաջին խումբ՝ 1.022, երկրորդ խումբ՝ 9.008, երրորդ խումբ՝ 5.383, մանկուց հաշմանդամություն ունեն 690 երեխա), ծնողազուրկ են 2.865 երեխա, որից՝ 55 երկկողմանի:

01.01.2011թ. դրությամբ աշխատանք փնտրողներ են 12.216 (2009թ. նույն ժամանակաշրջանում՝ 12.780, նվազումը՝ 4.4 տոկոս), չզբաղված աշխատանք փնտրողներ են 10.808 (նախկինում՝ 11.093, նվազումը՝ 2.6 տոկոս), գործազուրկներ են 10.641 (նախկինում՝ 10.823, նվազումը՝ 1.7 տոկոս): Մարզում գործազրկության մակարդակը կազմում է 10.3 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազումը կազմում է 0.1 տոկոս (10.4 տոկոս): 2010թ. ընթացքում մարզում աշխատանքի են տեղավորվել 587 աշխատանք փնտրողներ, որոնցից 331-ը՝ կին (2009թ.՝ 433):

«Լոռու մարզի յուրաքանչյուր համայնքի բնակչության սոցիալական վիճակի հիմնավոր ուսումնասիրություն և ըստ դրա սոցիալական տարաբնույթ ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում» թիվ 1 ծրագրով նախատեսված աշխատանքներն իրենց մեջ ներառել են մի շարք ենթաբաղադրիչներ: Ակտիվացել են նաև հաշմանդամների շրջանում իրականացված աշխատանքները: Ավելին՝ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստերը ներառել են բնակչության ընդունելության բաղադրիչ, նիստերը լայնորեն լուսաբանվել են և եղել են բաց:

Նպատակադրված աշխատանքներ են տարվել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ (թեքահարթակներ, մատչելի մուտքեր և այլն): Այսքանով հանդերձ, թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, այնուամենայնիվ հիմնախնդիր է մնում շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումն է դեպի պետական ու տեղական ինքնակառավարման

մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն:

Քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը նախատեսված էր իրականացնել ՀՀ պետական բյուջեից տրամադրված միջոցներով (միջոցներ չեն տրամադրվել): Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի ներկայացուցիչների հետ մարզի քաղաքային համայնքներում իրականացվել է մոնիթորիգ և փաստվել, որ ծրագրում ներկայացված հարցը աջակցության կարիք ունի, թեև առանձին կազմակերպություններում հարցին տեղային լուծումներ են տրվել:

Հաշմանդամություն ունեցող անձանց համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ 2010թ. ևս համագործակցված աշխատանք իրականացվեց հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզատրոպեդիկ պարագաներով և պրոթեզներով (անվասայլակ, լսողական սարք, օրթոպեդիկ կոշիկ, արմնկահենակ, ձեռնափայտ, տարաբնույթ պրոթեզներ և այլն) ապահովելու ուղղությամբ: Հատկանշական է նշել, որ նպատակաուղղված պետական քաղաքականության շնորհիվ ներկայումս մարզում վերականգնողական պարագաների պակաս չունեն: Գործընթացին ակտիվ մասնակցություն են ունեցել ՀԿ-ները, մասնավորապես՝ 2010թ. «ԱՐԱՆ» ՀԿ-ն տրամադրել է 31 սայլակ, որից՝ 18-ը «Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամի, իսկ 13-ը՝ «Պրոթեզատրոպեդիկ» ՍՊԸ-ի կողմից: Իսկ 14 սայլակներ տրամադրվել է «Լիարժեք կյանք» ՀԿ-ի, իսկ 30 սայլակներ ու քայլակ՝ «Երուսաղեմի Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» ԲՀԿ-ի աջակցությամբ:

Լոռու մարզային գրադարանի կողմից իրականացվում են երկու ծրագրեր («Այլ խմբերի հետ աշխատանքներ և սպասարկում», «Ընտանեկան գրադարանավար»), որոնցում լայնորեն ընդգրկված են միայնակ տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ծնողազուրկ երեխաներ, անապահով բազմազավակ ընտանիքների դեռահասներ, իսկ համագործակցությունը ընթանում է հիմնականում ՀԿ-ների հետ («Օրրան», «Խաչվող ուղիներ», «Առաքելություն Հայաստան», «Արան»): Խրախուսելի էր կույրերի համար կիրառվող «Արև» ծրագիրը, որում ընդգրկվել են 150-ից ավելի շահառուներ, նրանցից շատերն ավարտել են համապատասխան դասընթացներ: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց տրամադրված համակարգիչները միացված են նաև համացանցին:

Զգալի աշխատանքներ է իրականացնում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը, որն իր նիստերի ընթացքում քննարկում է ՀՀ օրենսդրական փոփոխությունները, հարցապնդումներին տալիս համապատասխան պարզաբանումներ (պարտադիր հրավիրվում են լրատվամիջոցները), իսկ արդյունքները ներկայացվում ազգային հանձնաժողովին:

Շարունակել է լույս տեսնել «Լիարժեք կյանք» պարբերականը, որը լայնորեն լուսաբանում է մարզում հաշմանդամների շրջանում կազմակերպվող աշխատանքները:

Սոցիալական պաշտպանության պետական ծրագրում ընդգրկելու նպատակով ՀՀ ՏԿՆ է ներկայացվել մարզի ՀԿ-ների կողմից առաջարկվող մի շարք ծրագրեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը, նրանց իրավունքների իրացման և հասարակություն ինտեգրմանն ուղղված:

2010թ. դեկտեմբերի 2-ին Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը լայնորեն նշվել է Սպիտակում (նախորդ տարի այն անցկացվել էր Ստեփանավանում): Օրակարգում՝ հանձնաժողովի արտագնա նիստ, «Մոլորակ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ների հաշվետվություն, քաղաքացիների ընդունելություն, ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք, համերգային ծրագիր:

Վանաձորում անցկացվեց խուլ-համրերի Հայաստանի շախմատի առաջնությունը, որին ինչպես մարզպետարանը, այնպես էլ Վանաձորի քաղաքապետարանը մեծ աջակցություն ցուցաբերեցին (մրցաշարի և մասնակիցների տեղի տրամադրման, մրցավարական անձնակազմի և կազմակերպչական աշխատանքներին): Այս գործում զգալի էր «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ի ակտիվությունը: CPISRA միջազգային սպորտային կազմակերպության միակ հավատարմագրված ազգային ներկայացուցիչ Հաշմանդամային սպորտի հայկական ֆեդերացիայի կողմից անցկացված 2010թ. Հայաստանի չեմպիոն է դարձել Նվեր Միրզոյանը (բոչիա մարզածն), իսկ մրցանակակիր է դարձել Շուշան Մելիքջանյանը (սեղանի թենիս), որոնք «Լիարժեք կյանք» ՀԿ-ի անդամներ են: «Լիարժեք կյանք» ՀԿ-ն շարունակել է իր ծրագրերը («Կայուն ապագա՝ կրթության և մասնագիտական ուսուցման միջոցով», «Հաշմանդամ մարդկանց շահերի պաշտպանություն», «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ»), ավելին նկատելի աշխատանքներ է իրականացրել երեխաների շրջանում (միջոցառումներ երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված): Անապահով ընտանիքների 120 երեխաներ, որից՝ 27-ը հաշմանդամություն ունեցող, իրենց հանգիստն են անցկացրել ամառային ճամբարներում:

Տարեց անապահով քաղաքացիների հիմնահարցերը ևս ուշադրության կենտրոնում են: Այս գործում մարզում զգալի աշխատանքներ է իրականացնում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն, որի շահառուները բարեգործական ճաշարաններից օգտվող, տնային կարիք ունեցող հարյուրավոր տարեցներն են (շահառուների թիվը գրեթե 300 մարդ է): Գնահատելի է «Հայկական Կարիտաս» ՄԲՀԿ-ի գործունեությունը Վանաձորում և Տաշիրում՝ «Տնային խնամք» ծրագրով (160 տարեցների ընդգրկումով):

Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում իրականացվել է միայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան, իսկ մասնագիտական վերապատրաստում 2010թ. մարզում չի կազմակերպվել:

Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավման ուղղությամբ, որը ներառում է տեղեկատվական բազաների փոխանակում, ընթացել է կենտրոնացված կարգով («Պառնաս», հարակից բազաներ), որոնց կիրարկման գործին զգալի մասնակցություն են ունեցել ՄԾՏՏՄ-ների կից գործող սոցիալական աջակցության խորհուրդները (այս կազմում ներգրավված են սոցիալական բնագավառը ներկայացնող զբաղվածության, կենսաթոշակային ապահովության տարածքային մարմինների, համայնքների և ակտիվ ՀԿ-ների ներկայացուցիչներ): Այս համագործակցության շնորհիվ է, որ անապահով ընտանիքներից շատերը ներգրավվում են նաև ՀԿ-ների կողմից իրականացվող սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերում (մասնավորապես այդ ակնառու է «Լիարժեք կյանք» ԲՀԿ-ի և «Հայկական Կարիտաս»-ի Վանաձորի մասնաճյուղի պարագայում):

Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավման, համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով կառուցողական առաջարկություններ են ներկայացվել և ակտիվ մասնակցություն է ապահովվել ինտեգրված սոցիալական ծառայությունների ստեղծման գործում, որը համահունչ է ներկայացված թիվ 2 ծրագրին՝ «Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում»:

Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավման ենթաբաժնում առաջարկված ներքոշարադրյալ ծրագրերից երկուսը (Ծրագիր թիվ 3. «Ալավերդի քաղաքի

տարեցների սոցիալական ծառայություններ մատուցող ցերեկային կենտրոնի գործունեության կազմակերպում և համակարգում» և Ծրագիր թիվ 4. «Սպիտակ քաղաքում տարեցների սոցիալական ծառայություններ մատուցող շուրջօրյա խնամքի կենտրոնի կառուցում և գործունեության կազմակերպում և համակարգում») կմեկնարկեն 2011թ., որոնց համար ակնկալվում են պետական հատկացումներ: Նախապատրաստական զգալի աշխատանքներ են իրականացվել Սպիտակի և Ալավերդու քաղաքապետարանների հետ՝ համապատասխան տարածքների տրամադրման ուղղությամբ: Պետական ֆինանսավորման դեպքում հիշյալ երկու ծրագրերն են իրագործելի են:

Իսկ թիվ 5 ծրագիրը՝ «Աջակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ տարեցներին» յուրաքանչյուր եռամսյակ իր համապատասխան շտկումներն է ունենում Վանաձորի ՄԾՏՏՄ-ի կողմից. Ըստ տրամադրված ցուցակի մասնագետների կողմից համապատասխան ուսումնասիրությունից հետո տրամադրվում է համապատասխան օժանդակությունը, որը համահունչ է ՀՀ կառավարության որոշմանը:

Թիվ 6 Ծրագրով նախատեսված է «Վանաձորում հաշմանդամների վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման ծառայության կազմակերպում և համակարգում» աշխատանքները: 2010թ. Վանաձորի քաղաքապետարանը փաստել է, որ լիովին պատրաստ է աջակցել ծրագրի կենսագործմանը: Պետական ֆինանսավորման դեպքում հիշյալ ծրագիրը իրագործելի է:

Պետական աջակցություն է ակնկալվել թիվ 7 Ծրագրի՝ «Ստեփանավանի հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման համայնքային կենտրոնի զարգացում» ծրագրի իրականացման համար: 2010թ. պետական աջակցություն չի տրամադրվել, իսկ ՀԿ-ն արդեն իսկ ապահովվել է դոնոր կազմակերպությունների համապատասխան աջակցությունը ծրագրի շարունակականությունը ապահովելու ուղղությամբ:

Զբաղվածության քաղաքականության աջակցության բաղադրիչներից է թիվ 8 Ծրագիրը՝ «Գործազրկության մակարդակի նվազեցումը», որի մեջ զգալի դեր ու նշանակություն ունի «Գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման միջոցառումների կազմակերպումը»:

2010թ. մարզում մասնագիտական ուսուցման դասընթացների են մասնակցել 147 գործազուրկներ, որոնցից 102-ը՝ կին: Աշխատանքի են տեղավորվել 66-ը: 2010թ. ընթացքում «Աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում» ծրագրում ընդգրկվել են 34 աշխատանք փնտրողներ, որոնցից 18-ը՝ կին: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար ֆինանսական աջակցություն են ստացել 6 աշխատանք փնտրողներ: 2010թ. 4-րդ եռամսյակից սկսվել և մինչև 2011թ. փետրվարը կշարունակվի «Աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում» նոր ծրագիրը, որում ընդգրկված են 22 աշխատանք փնտրողներ, իսկ մասնագիտական ուսուցման դասընթացներին՝ 112 մարդ:

2010թ. ընթացքում մարզում աշխատուժի պահանջարկ են ներկայացրել 97 գործատու և այն կազմել է 359 աշխատատեղ, որից 273-ը՝ բանվորական: Աշխատանքային պահանջի բավարարումից հետո տարեվերջին այն կազմել է 21 աշխատատեղ, որից բժշկական (տարբեր մասնագետներ), տուրբինիստի, մեքենավարի և այլն: 2010թ. Լոռու մարզում իրականացվեց աշխատանքի տոնավաճառ և տարեցտարի ավելի ակտիվ են իրենց դրսևորում գործատուները:

Մյուս ենթաբաղադրիչով՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի իրականացում» 2010թ. Լոռու մարզում իրականացվել է 60 ծրագիր, որոնցում

ընդգրկվել են 31.256 մարդ/օր, 01.01.2011թ. դրությամբ իրացվել է 102.248.700 դրամ (2009թ.՝ 55 ծրագիր, 89.919.800 դրամ, 28.554 մարդ/օր, ծավալները կրճատվեցին ճգնաժամի պատճառով):

Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը բաղադրիչն ընդգրկել է թիվ 9 Ծրագիրը՝ «Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովումը» և թիվ 10 Ծրագիրը՝ «Ձեռնարկ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովումը», որոնք դիտարկված են լիովին պետական ֆինանսավորման դաշտում:

Առաջին ծրագրով փաստվել է, որ կարիքավոր փախստականների ընտանիքների թիվը ներկայումս կազմում է 195, սակայն 2005թ.-ից մինչև հիմա Լոռու մարզում ոչ մի ընտանիքի բնակարանային հարց չի լուծվել, իսկ 2010թ. միայն երկու զինհաշմանդամի ընտանիքների է տրամադրվել պետական նպատակային աջակցություն (Լոռու մարզում 01.01.2011թ. դրությամբ բնակարանի կարիքավոր են զոհվածի և հաշմանդամի 90 ընտանիքներ):

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ կարտոֆիլի վիրուսազերծ պալարիկների արտադրությունը երկրագործության ինստիտուտի Ստեփանավանի տարածքային կայանի հիման վրա
- ✓ բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
- ✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Պետական ֆինանսավորմամբ 2010թ. տարբեր հիվանդությունների դեմ պատվաստում կստանան 67.000 խոշոր եղջերավոր կենդանիներ, 13.000 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 9600 գլուխ խոզեր, 143500 թև թռչուններ:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

2010թ Լոռու մարզում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ավստրիական կառավարության ֆինանսավորմամբ իրականացվում է «Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ գոտիներում աղքատության նվազեցում և վստահության ձևավորում գյուղական համայնքների կայուն զարգացման գործում՝ քաղաքացիական հասարակության կառույցների դերն ամրապնդելու միջոցով» STAGE-II ծրագիրը:

Ծրագրի նպատակն է ամրապնդել հայ-վրացական սահմանամերձ համայնքների բնակիչների բարեկամությունը, աջակցել համայնքներում գյուղատնտեսության զարգացմանը:

- Շվեյցարական «Կազա» հիմնադրամի աջակցությամբ Գոգարան համայնքում գործող «Զարթոնք» կոոպերատիվին տրամադրվել է տրակտոր իր գյուղատնտեսական գործիքներով և ապրանքային վարկի ձևով սերմացուներ ու պարարտանյութ (շուրջ 15 մլն դրամ):
- Լոռու մարզում ոչխարաբուծության զարգացման համար կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմվել է մարզի ոչխարաբուծության զարգացման համալիր ծրագիր:
- 2010թ. մարզում ոռոգվել է 2027,2 հա վարելահողեր նախորդ տարվա 985,4 հա-ի դիմաց, այսինքն 1041,8 հա ավելի է ոռոգվել քան նախորդ տարում: Ոռոգման, ջրարբիացման և համակարգի շահագործման նպատակներով «Գետիկ» և «Լոռու ջրանցք» ԶՕԸ-ների կողմից կատարվել է ջրառ 62544.5 հազ. մ³, որի ջրտույքը կազմում է 84344.5 հազ. մ³, հասույթը՝ 38251.5 հազ. դրամ: 01.01.2011թ դրությամբ ԶՕԸ-երի կողմից կատարվել է տրված ջրի վարձավճարների հավաքագրում 34412.6 հազ. դրամ կամ գանձումը կատարվել է 90.0%-ով:
- **2010թ «ՀՆՀ-Հայաստան» հիմնադրամի կողմից կառուցվել է Նալբանդի միջտնտեսային ջրանցքի մայրուղային մասը 5520մ երկարությամբ 820մմ տրամաչափի մետաղական խողովակից: Վերակառուցվել է նաև նույն ջրանցքի գլխամասային ջրառ հիդրոհանգույցը: Նշված աշխատանքների իրականացման համար կատարվել է մոտ 2,1 մլն ԱՄՆ դոլարի ներդրում:**
- «ՀՆՀ-Հայաստան» հիմնադրամի և համայնքների կողմից 15% համաֆինանսավորման սկզբունքով Այգեհատ, Օձուն և Ճոճկան համայնքներում վերակառուցվելու են ոռոգման երրորդական կարգի ջրանցքներ 7337մ ընդանուր երկարությամբ 105,2 մլն. դրամ նախահաշվային արժեքով: Պատրաստ են նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, համայնքների կողմից կատարվել է 15%-ի՝ 15,78 մլն դրամ ներդրում: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2011թ գարնանը:
- Կարմիր Աղեգի համայնքում այս տարի 4 հա վարելահողերի վրա կառուցվել է անձրևացման եղանակով ոռոգման համակարգ:

3.2. Բնապահպանություն

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2010թ. աշխատանքներ են տարվում հետևյալ ոլորտներում՝

- ✓ Մարզի շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում:
- ✓ Համապատասխան ընթացք տալ մարզի արդյունաբերական արտադրություններից առավել վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բնապահպանական ծրագրերի կազմմանը (Ալավերդի, Օձուն, Աքրորի, Հաղպատ, Ախթալա համայնքներ):
- ✓ Բացատրական աշխատանքներ տանել ՏԻՄ լիազորությունների շրջանակներում անտառամերձ համայնքների դերի բարձրացումը անտառապահպանության գործում ապահովելու համար: Խթանել մարզում համայնքային և մասնավոր ատառների անտառհիմնման աշխատանքները:

- ✓ Աջակցել «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Բնության Համաշխարհային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղին Գերմանիայի կառավարության ֆինանսավորմամբ 2010թ իրականացվելիք 50հա համայնքային տարածքի անտառպատման աշխատանքներին:
- ✓ Կազմակերպել այցելություններ Թեղուտի հանքավայր՝ շահագործման հետևանքով իրականացվող ծառահատումների և առկա բնապահպանական ծրագրերի կատարման վիճակի ուսումնասիրության նպատակով:
- ✓ Մասնակցություն մարզի անտառային տարածքների ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքների կազմակերպմանը:
- ✓ Կատարել ուսումնասիրություն և տեղեկատվության պարբերաբար ամփոփում՝ ընդերքշահագործող կազմակերպությունների և քարամշակման արտադրամասերի գործունեության վերաբերյալ:
- ✓ Սերտ համագործակցել Օրիոս բնապահպանական տեղեկատվական կենտրոնների, բնապահպանական հասարակական կազմակերպությունների և անհատ քաղաքացիների հետ:

2010թ Լոռու մարզում իրականացվել են բնապահպանման ոլորտի հետևյալ աշխատանքները.

- «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ մարզի տարածքում իրականացնում է կրթական ծրագիր «Բնապահպանական կրթություն» թեմայով, որի արդյունքում տպագրվելու է համապատասխան ձեռնարկ՝ «Միտք սերմանիր, ծառ տնկիր» վերնագրով:
- «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը 2010թ. ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ իրականացրել է.
 - ✓ Արջուտ համայնքի 21 հա դեգրադացված հողատարածքների անտառպատում:
 - ✓ Ջրաշեն և Ծաղկաբեր համայնքներում 2009թ. իրականացված 335 հա անտառպատված տարածքներում անտառմշակույթների լրացման աշխատանքներ:

Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային ծրագրի շրջանակներում Չկալով համայնքի ճանապարհի եզրերով (2,5 կմ երկարությամբ) իրականացվել է ծառատունկ՝ թվով 600 հատ բարդի և հացենի:

- 2010թ. ապրիլի 22-ին «Ռուսական մշակույթի օջախ» ՀԿ-ի նախաձեռնությամբ Վանաձոր-Սպիտակ ավտոմայրուղու 9-րդ կիլոմետրում գտնվող հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող հուշահամալիրի տարածքում իրականացվել է տարածքի բարեկարգման աշխատանքներ և թվով 200 հատ թխկենիների ծառատունկ:
- Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման համար կատարված անտառահատմանը զուգահեռ մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով կատարվել է ծառատունկ 108 հա մակերեսի վրա: Անտառվերականգնման այս ծրագիրը շարունակական է:
2010թ. մարզի անտառտնտեսությունների կողմից իրականացվել է.
- պետ. Բյուջեով՝ նախորդ տարիների ընթացքում հիմնադրված անտառմշակույթների լրացում – 79,7 հա,
- WWF ծրագրով՝
 - ✓ անտառմշակույթների հիմնադրում – 100հա,
 - ✓ անտառի բնական վերաճին օժանդակելու համար ցանկապատում – 10կմ:

Գործող օրենքի համաձայն Ալավերդու պղնձաձուլական գործարանի և Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին պետ. բյուջեից կատարվում են մասնահանումներ՝ բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար:

Ստորև բերվում է ՀՀ պետ.բյուջեի կողմից 2008-2010թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար տրամադրված գումարների վերաբերյալ տեղեկատվություն.

հազ. դրամ

	Տարիները		
	2008	2009	2010 առ 1-ը հուլիսի
Ալավերդի	68226.5	103564.2	37292.2
Հաղպատ	8610.0	9197.3	9197.3
Օձուն	8814.5	8992.8	9006.0
Աբրրի	16065.5	18470.5	18994.2
Ախթալա			2540.0
Ընդամենը	101716.5	140224.8	77029.6

Մարզպետարանի ջանքերով 2010թ. Ախթալա համայնքն էլ ընդգրկվեց վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հազվի համայնքն էլ է գտնվում Ալավերդու պղնձաձուլական գործարանի վնասակար ազդեցության գոտում, Լոռու մարզպետը դիմել է ՀՀ բնապահպանության նախարարին, որպեսզի Հազվի համայնքը նույնպես ընդգրկվի 'Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին' ՀՀ օրենքի սահմաններում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների 2011-2013թթ. ցանկում: Հարցին տրվել է դրական լուծում և լրամշակված ցանկի տարբերակը ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2010թ. մարզի քաղաքաշինության ոլորտում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված է 9865.14 մլն դրամի կապիտալ շինարարության ծրագիր, այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների.

- ՀՀ պետական բյուջեի հաշվին՝ 7337.11 մլն դրամ, որից.
 - ✓ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի մասով 6200.00 մլն դրամ
 - ✓ Դպրոցաշինություն ԾԻԳ ՊՀ-ի մասով 540.00 մլն դրամ
 - ✓ Լոռու մարզպետարանի մասով 81.88 մլն դրամ,
 - ✓ ՀՀ քաղաքաշինության նախ. մասով 419.73 մլն դրամ,
 - ✓ ՀՀ Մշակույթի նախարարություն 5.50 մլն դրամ,
 - ✓ ՀՀ Ազգային անվտանգություն 60.00 մլն դրամ,
 - ✓ ՀՀ ԿԱ ՊԵԿ 30.00 մլն դրամ,
 - ՀՄՆՀ 256.63 մլն դրամ
